ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԷՋԵՐ Հ.ՏԵՐ-ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆՑԻ «ԱՂԷՏՆԵՐԻ ՅՈՒՇԱԳԻՐԸ» ՆՈՐԱՀԱՅՏ ՕՐԱԳՐԻՑ (1918թ.)

Ակադ. Մկրտիչ Ներսիսյանի (1909-1999թթ.) արխիվը նախնական մշակման ենթարկելիս երևան է եկել «Աղէտների յուշագիրը. 1918թ.» խորագիրը կրող ձեռագիր մի ծավալուն օրագրություն (243 մեծաղիր էջ), որի հեղինակն է Հ.Տեր-Աստվածատրյանցը: Կազմի վրա տպագրի նմանեցվող խոշոր տառերով գրված է. «Որդի՛ք Հայկայ, մենք կենաքի քաղցրութիւնը չտեսանք, գոնէ դուք տեսէք, որ մեր ոսկորները հանգստանան գերեզմաններում: ՀԱՏԷՐԱՍ: 1/I 1918թ. ԹԻՖԼԻՍ»: Հեղինակի այս ձեռագիր աշխատությունը կատարելապես անծանոթ է հայագիտությանը: Օրագրության առաջին էջի վերին լուսանցի աջ եզրին կա այլ թանաքով ու գրչությամբ կատարված համարակալում՝ 273, և էջերի թիվ՝ 1-243: Ի հաստատումն հիշյալ թվերի ստուգության դրված է հստակորեն կարդացվող կնիք՝ «Խ.Ս.Հ.Մ. գիտությունների ակադեմիայի Հայկական [ֆիլիալ]: Армянский филиал Академии Наук [СССР]. Պատմության յեվ նյութական Կուլտ. ինստիտուտ. Институт истории и материальной культ.»: Հետևաբար՝ ձեռագիրն իբրև արխիվային միավոր պատկանել է ԱՐՄՖԱՆ-ի (Գիտությունների ակադեմիայի Հայկական մասնաճյուղի) Պատմության և նյութական մշակույթի ինստիտուտին: Սկադ. Մ.Գ.Ներսիսյանը 1937-41 թվականներին եղել է այդ ինստիտուտի գիտաշխատող, ապա և տնօրեն: Պիտի ենթադրել, թե նա մտադրություն է ունեցել եթե ոչ ամբողջապես հրատարակել նոր ժամանակների պատմության այս կարևոր աղբյուրը, ապա գոնե նրանից քաղումներ կատարել 1918թ. իրադարձություններին անդրադառնալիս: Կարծում ենք, սակայն խորհրդային տարիներին ամբողջական հրատարակություն կատարելը գործնականորեն անկարելի էր, քանի որ օրագրական գրառումներում պաշտոնական պատմագրությանը հակասող, հաճախ նույնիսկ բոլշևիկների վարած քաղաքականությունը ուղղամտորեն քննադատող էջեր կան, գաղափարական ակնառու հակադրումներ: Այս իրողությունը թույլ է տալիս վարկած առաջադրել, թե գուցե ինստիտուտի տնօրեն Մ.Գ.Ներսիսյանը պարզապես արխիվի հերթական «զտումից» փրկերո

համար «Աղետների յուշագիրը» վերցրել է և «մոռացության տվել»: Այստեղ նկատառելի է երկու պարագա ևս. ինչպես տեղեկանում ենք գիտնականի մի հարցազրույցից, 1930-40-ական թվականներին նա քանիցս գաղափարական քննադատության և նույնիսկ ամբաստանության է ենթարկվել. հետևաբար այս բնագրի հրատարակությունը վստահաբար կծանրացներ նրա վիճակը, և ապա՝ 30-ական թվականների վերջերից նա դադարեց զբաղվել Դաշնակցություն կուսակցության պատմության հետ կապված հարցերով: «Ինձ համար պարզ դարձավ, որ հնարավոր չէր ճշմարիտ խոսք ասել այդ կուսակցության մասին: Սկսեցի զբաղվել հայ ժողովրդի XVIII և XIX դարերի պատմության հարցերով» (տես «Ակադեմիկոս Մկրտիչ Ներսիսյան», Երևան, 2004, էջ 10-11):

Հ.Տեր-Աստվածատրյանցի օրագրությունները վերաբերում են 1918 հունվարի 1-ից մինչև հունիսի 20 կատարված իրողություններին, հավասարապես առնչվելով այդ շրջանում հայոց միջավայրում գործող բոլոր կուսակցություններին, և առաջին հերթին, բնականաբար, դաշնակցությանը: Ինչևէ, փաստն այն է, որ աշխատությունը պահպանվել է և նրանում գրառված տեղեկությունները կարևոր լրացումներ են կատարում 1918թ. առաջին կեսի բարդ ու բազմաշերտ իրադարձությունների գնահատության խնդրում: Հեղինակը գրառումներ կատարելիս և անցուդարձը վերլուծելիս չի գոհանում պաշտոնական շրջանների (Անդրկովկասի Սեյմի և նրանում ներկայացված կուսակցությունների) տված տեղեկություններով ու գնահատություններով: Նա կարողանում է տեղեկանալ ստացվող հեռագրական նյութերին, ճանաչել Սեյմում ներկայացված էթնիկական ու կուսակցական խմբավորումների շահագրգռությունները, դիտարկել դրանք հայոց ազգային խնդիրների տեսանկյունից: Օր-օրի կատարվող դեպքերին հետևելիս, բնականաբար, գրառողը զերծ չէր կսլող մնալ քաղաքում (Թիֆլիսում) շրջանառող լուրերի ազդեցությունից, իբրև անհատ արձագանքում էր դրանց՝ ներկայացնելով կենդանի առօրյա իրողությունը: Նա հնարավորություն չունի լրացուցիչ ստուգումների ենթարկելու արձանագրվող անցքը. ուստի նրա ոչ բոլոր գրառումներն են հավասարապես փաստական, բայց որ գործ ունենք լայն իմացությունների ու ազգային ազնիվ մղումներ ունեցող հմուտ մի հեղինակի հետ՝ անվերապահ է:

«Աղետների յուշագրի» հեղինակի մասին մեր ունեցած տեղեկությունները խիստ սահմանափակ են, բացառապես քաղված նրա օրագրության էջերում եղած ոչ ուղղակի վկայություններից: Հույս ունենք, թե Երևանի և Թիֆլիսի արխիվներում կարելի պիտի լինի ի հայտ բերել նրա կյանքին ու գործունեությանը վերաբերող նոր նյութեր:

Այստեղ ի ծանոթություն ընթերցողին է առաջարկվում մեր կողմից տպագրության պատրաստվող բնագրից մի քանի էջ՝ մասնավորապես 1-6 եղած օրագրությունները, որ ներկայացվում են Էրզրումը թուրքերին հանձնե-

յու պարագաները, ինչպես նաև դրվագներ Սեյմի ներկայացուցիչների ե թուրք պատվիրակների միջև սկսված բանակցությունների նախնական ընթացքից:

Հաճելի պարտք ենք համարում շնորհակալություն հայտնել տիկին Նոնե Դելրոյսանին՝ Մ.Գ.Ներսիսյանի արխիվում պահպանված այս բնագիրը մեզ ի հրատարակություն տրամադրելու համար:

«ԱՂԷՏՆԵՐԻ ՅՈՒՇԱԳԻՐԸ. 1918»

1 մարտի

Սարիղամիշից գեն. Օդիշելիձէն հեռագրում է, որ փետրուարի 27-ին, ցերեկուայ ժամը 12-ին տաճիկները գրաւել են Էրգրումը: Եղել է թեթև կռիւ, վիրաւորուած է գնդապետ Թորգոմը, մեր կողմից կորուստ եղել է 200 վնասուածներ (?):

- Թիֆլիսի Սօցիալիստ-յեղափոխականների Կեդրոնական կոմիտէն յայտարարել էր չենթարկուել Ազգային խորհրդի կոդմից յայտարարուած զօրակոչին, սակայն դրա դէմ բողոքել են Ախալցխայի հայ սօցիալիստ յեղափոխականները: Ասում են, որ Սօցիալ-յեղափոխականների շրջանային կոմիտէն ուղղել է արդէն իր այդ սխալ քայլը:

Հաշտարար պատուիրակութիւնը. - Տաճկական պատուիրակութիւնը Շէվկէտ նաւով 27-ին փետրուարի հասել է Տրապիզոն, բաղկացած 5 հոգուց, նախագահութեամբ ծովային գնդապետ Ռայիխ բէյի: Մեր պատուիրակութեան քարտուղարը ողջունել է նրանց նաւի վրայ, որից յետոյ տաճկականս մի պատուիրակ եկել է մերոնց մօտ՝ պայմանաւորուելու տեսակցութեան տեղի և ժամի մասին: Նախնական մի քանի հարցեր պարզելու համար Ռայիխ բէյը և Չխէնկելին տեսնուել են մի տան մէջ, որը որոշուած էր ժողովի համար: Որովհետև մերոնց յայտնի չէ տաճկական կառավարութեան պատասխանը վերջին հեռագրին՝ մեր շրջանների մէջ էվակուացիայի մասին, ուստի Չխէնկելին պատուիրակութեան նախագահին հարց է առել, թէ յայտնի՞ է արդեօք նրան տաճկական գեներալիսիմուսի առաջարկը և ընդունո՞ւմ է նախագահը այդ առաջարկութիւնը, իբրև ոչ ցանկութիւն Օտտոմանեան կառավարութեան՝ շարունակել հաշտութեան բանակցութիւնները, նախագահը պատասխանել է, որ ինքն այդ առաջարկի մասին ոչինչ չը գիտէ և խնդրում է Չխէնկելու հարցը գրաւոր կերպով ներկայացնել: Տաճիկներն իրենց պատասխանի համար ժամանակ են խնդրել և յայտնել են, որ իրենց նպատակն է հաստատուն հաշտութիւն կնքել: 28 փետր. մեր պատուիրակութիւնը ափ է դուրս գալիս հաշտութեան բանակցութիւնների համար:

- *Դերմանացիք* գրաւել են Պետրոգրադը, բոլշևիկները Մոսկուա են տեղափոխուել:

- *Անգլիացիք.* - Այսօր քաղաքումս լուրեր են պտտում, որ անգլիացիները զինուած ընդհարումներ են ունեցել Թեհրանում և Թաւրիզում պարսկական զօրքերի հետ և իբր թէ գրաւել են այդ քաղաքները: Ինձ այդ ասելը հաղորդողն է Թիֆլիսի հեռագրատան ծառայողներից մի հայ ծառայող:

- Լ.ոյս տեսաւ «Կարմիր օրեր» թերթի N 2-ը:

- Այսօր, Թիֆլիսի ժողովսրանի տարեկան ժողովին ես ընտրուեցայ աւագ: Ժողովն ընդունեց միաձայն իմ առաջարկը՝ գումարել մօտակայում առաձին ժողով և քննել Թիֆլիսի ժողովարանը «Հայկական Ակումբ» անուանելու հարցը: Իր 28000ռ. զուտ արդիւնքից 15000ռ. յատկացրեց Ազգային խորհրդին:

Էրզրումի առման մանրամասները. - Սէյմի նախագահը 28 փետր. ստացել է հետեւեալ հեռագիրը՝ «Հաղորդում եմ զեներալ Վրիշինսկու 27 վետրուարի ուուսւ N 498 հեռագրի պատճէնը. ի տեղեկութիւն գնդապետ Զինկեվիչը Հասան-Ղալասյից հաղորդում է, որ այսօր փետրուարի 27-ին լոյս ծագելիս Էրզրումի բերդագնդի (гарнизон) մասերը, իրենց գլուխ ունենալով Առաջին հայկակտն գունդը, սկսեցին թողնել քաղաքը և հեռանալ: Թիւրքերը առաւօտուանից սկսեցին յարձակուել Խարբերդի, Տրապիզոնի և Օլթու կողմի արտաքին ամրութիւններից (равелины) և 7 ժամին առաւօտեան Տրապիզոնեան ամրութիւնը գրաւուած էր նրանց կողմից, չը նայած կապիտան Ստոյակինի գլխաւորութեամբ անձնուեր կերպով մի բուռն զինուորների կողմից եղած պաշտպանման և բերդի արտիլերիայի սպայի: Սորանից յետոյ սկսուեց ամբողջ բերդապահ զօրքի տարերային նահանջը, որոնք հաւաքուեցան Հասան-Ղալէում: Կօմանդիրը Հասան-Ղալա և Խնուս տուել է հետեւեալ հրաման. «Հասան-Ղալա. զեն. Անդրանիկին, Խնուս՝ գնդապետ Օսիպովին. Հրամայում եմ զեն. Անդրանիկին Էրզրումի զօրամասը (отряд) ժողովել Հասան-Ղալէ ե ձեռք առնել բոլոր միջոցներ հանգստացնել և կարգի բերել: Էրզրումի զօրամասին՝ որքան կարելի է երկար դիմանալ Հասան-Ղալէի շրջանում, որպեսզի ապահովեն Խնուսի զօրամասի նահանջը դէպի Քէֆրիքեոյ: Գնդապետ Օսիպովին հրամայում եմ իր զօրամասով հիմիկուանից սկսել հետզհետէ նահանջել դէպի Քէֆրիքեոյ: Հէնց որ Խնուսի զօրամասը կը գայ այդտեղ, ամբողջովին մտնել զեն. Անդրանիկի հրամանատարութեան ներքոյ: Կարմունջի զօրամասին հրամայում եմ հետզհետէ նահանջել դէպի Ղարաքիլիսա: 27 փետրուարի, 16 ժամ. 30 ր. (երեկոյեան 4ժ. 30ր.): Օդիշելիձէ:

Որովհետև ոչ մի յարաբերութիւն չունեմ Վանի հետ, խնդրում եմ, զօրքի հրամանատարի հրամանով, ձեր կարգադրութիւնը Վանի զօրամասի վերաբերեալ կարգադրութիւններ անելու և նրան յայտնել համապատասխան վիտոդութիւններ: 27 փետր. Վրիշինսկիյ»:

- 25 և 26 [փետրուարի] Էրզրումի շրջանում մեր առաջագնաց գնդերը Ալիլիջայի և Թանիա-Դարեսսու ուղղութեամբ հանդիպելով թիւրքական կազմակերպ զօրամասերին, թնդանօթներով, գնդացիրներով և հեծեալ զնդով կռուով ետ քաշուեցան դէպի Էրզրումի ամրութիւնները, կորցնելով 10 սպանուած և 180 վիրաւոր և անյայտ կորած 50 մարդ, կանտուզիայի է ենթարկուած ենթգնդապետ Թորգոմը և ծանր վիրաւորուած է Տէր Դանիէլեան: Խնուսի կողմեր, Խնուսից դէպի հիւսիս Մանջիղի գիւղի մօտ քշել են քրդերին: Քելլիի շրջանում (Խնուսից հարաւ) նոյնպէս քրդեր են երևան հանուած: Ճարբորխի կողմեր քրդերին քշել են, իսկ Ախլաթի մօտերը ունեցել են ընդհարումներ մեր առաջխաղաց գնդերը:

- Պաշտոնական յայտարարութիւնից երևում է, որ մերոնք Էրզրումում շատ բան չեն կարողացել ոչնչացնել և թողել են թէ ռազմամթերք և թէ պարենաւորում: Մեր կորուստներն են 200-ից աւելի սպանուած և վիրաւոր, և մօտ քսան սպայ, որոնք անհետք կորել են:

- Վրացիք գինում են և ճանապարհում Բաթումը պաշտպանելու և ամբողջ Գուրիան ստի է կանգնել:

Խորհրդածութիւններ 1. Անդրկովկասեան կառավարութիւնը շարունակ խանգարում էր մեր Ազգային խորհրդին իր ժամանակին զօրահաւաք անել. Ազգային խորհուրդը յայտարարեց զօրահաւաք 19-32 տարեկանների, իսկ Անդրկովկ. կառավարութիւնը՝ մինչև 25 տարեկանները: Այսպիսով, ի հարկէ հնար չեղաւ ժամանակին ամրացնել ռազմաբեմը: Սրա պատճառն այն է, որ տեղական կառավարութեան վրացի անդամները միամտաբար ասեմ թէ յիմարաբար (ըստ վրացական սովորութեան) լսեցին թուրք-թաթար անդամներին և գործը փչացրին: Դէ սիրելիք, մահմեդականը մահմեդական է, և նա պարզ աշխատում է իր հաւատակցի համար ... 2. Խանգարիչների դերումն էին նաև մենշևիկները, որոնք սպառնում էին դուրս գալ Ազգային խորհրդի կազմից, և թաղեցին գործը: 3. Հայ սոցիալ-յեղափոխականները հo պոռնիկի դերի մէջ մտան և ափաշկարայ կոչ արեցին չը հնազանդուել Հայոց Ազգային խորհրդի զօրակոչին և դասալիք զինուորների պաշտպան կանգնեցին: 4. Գեներալ Օդիշելիձէն, որ Էրզրումի շրջանի հրամանատրն է, անժամանակ, *ինչ-ինչ դիտումներով* թողեց Էրզրումը և իր կայանը փոխադրեց Սարիղամիշ: Սա էլ պօլիտիկա՞ է թէ ոչ: 5. Անդրանիկը շարունակ զօրք էր խնդրում, սակայն նրան լսող չեղաւ, և նրա խնդիրը չը կատարուեց: Այսպէս, ահա, դերը միաբանուեցան, որ միահամուռ ուժերով կործանեն հայկական գործը:

Մէյմ. Նիստ 26 փետրուարի նուիրուած էր Վեհիբ - փաշայի առաջարկին՝ դադարկել Բաթում, Ղարս և Արդահան: *Գէգէչկորին* և գլխաւոր հրամանատար գեն. *Լեբեդինսկին* հաղորդեցին մանրամասնութիւնները, որ մեր պատուիրակութիւնը հասել է Տրապիզոն, իսկ Թիւրքիոյ պատուիրակութիւնը չի եկել, իսկ վերջինս էլ, որ Թիւրքիան ամրացնում է Տրապի-

զանի շրջանը Եվրոպայից վտխաղրած զորքերով, և սկսուեց հարցի քննությունը. առաջին ճառախօս մենշևիկ *Ժորդանիան* առաջարկեց, որ պէտք է կնքել պատուաւոր հաշտութիւն և հայրենիքի պաշտպանութեան համար պէտք է. ամբողջ դեմոկրատխսն զենքի դիմի և որ գլխաւորն է՝ պահել այն, ինչ որ սուել է յեղուսվոխութիւնը: «Մուսաւաթի» կողմից *Խան-Խոյիսկին* մահմեդական սովորական խորամանկութեամբ առաջարկում է այդ հարցը քննել այն ժամանակ, երբ դա կարևոր կը լինի հաշտութիւնը չը գլուխ գալու պատճառով: Ուրեմն՝ սա ուզում է կովկասեան ազգերին քնացնել, որ թիւրքերը ներս գան ազատ կերպով: *Շահխաթունին* դաշնակցութեան կողմից յայտնում է հայերի պատրաստականութեան մասին տալ գոներ հայրենիքի պաշտպանութեան համար: Սոցիալ-յեղափոխական *Լորիսկիպանիձէն* և կադէտ *Իս. Սեմեոնովը* կանգնած են Ժորդանիայի տեսակետի վրայ, և Սէյմը ընդունում է բանաձև, որով կառավարութեան արած քայլերին տալիս է իր հաւանութիւնը:

27-ին վեցերորդի երեկոյ պատմական նիստ՝ նոսիրուած յեղափոխութեան տարեդարձին. որը շատ կարճ էր, և ճառ խօսեց միայն Սէյմի նախագահ Ն. Ս. Չխեիձէն: Նիստից յետոյ պալատի առջև տեղի ունեցաւ միտինգ, որտեղ խօսեցին Չխեիձէն, Գէգէչկորին, Մեսխիևը, Իս. Ռամիշվիլին. Արզումանեանը. ժուռնալիստ Վոյիտինսկին և ուրիշները:

2 մարտի

Սէյմ. 28/II դաշնակց. Համաստիլոս մտցրել է հարց Գանձակի մասին, որ հայերը և թուրքերը կոգիացել են վերջնականապէս և կարող է սարսափելի վախճան առաջանալ, որի համար ընդունում է առանձին պատգամաւորութիւն:

Առայժմ Սէյմում կան 24 վրացի. 28 հայ, 37 մահմեդական, 4 ռուս, 1 գերմանացի. 1 օս. 1 լեզգին, 1 քուրդ և 2 թաթար պատգամաւորներ, որոնցից 16 փաստաբան, 17 ժուռնալիստ, 8 ինժեներ, 16 մանկավարժ, 6 բժիշկ, 3 զինուորական, 1 կօնտրոլչիկ, 1 առևտրական, 3 բանուոր, 9 մունիցիպալական գործիչներ, 9 ուսանող, 1 գրականագէտ, 1 ագրոնոմ, 1 երկրաչափ. 1 հաշուապահ. 1 քիմիկոս և 2 հրապարակախօս: Սորանցից 62 բարձրագոյն կրթութեամբ, 28՝ միջնակարգ (որոնց թում և ուսանողները 9 հ.), 8 ստորին և 1 ընտանեկան կրթութեամբ, իսկ 1-ը անգրագէտ:

Էրզրումի առման մասին զեն. Օդիշելիձէից ստացուած է գրութիւն՝ ուղարկուած 27 փետր. և ստացուած մարտի 1-ին. «Գեն. Անդրանիկի շտաբի կառավարիչ գնդապետ Զինկևիչը 27 փետր. 22 ժամին Քեֆրիքեօյից ապպարատով զեկուցեց հետևեալ մանրամասնութիւնները մեր զորքերի Էրզրումը թողնելու մասին. նախ ռազմական հրամանները չը կատարելու պատճառով (բաց է թողած) ... և երկրորդ, Էրզրումից հեռանալը տեղի ունեցաւ այն պատճառով, որ հայկական զորամասերում, ո-

ռնք կազմուած էին ռուսահայերից, նկատելի էր ցանկութիւն տուն վերադառնալու, իսկ թուրքահայերի զօրամասերում՝ գլխովին դեզօրգանիզացիա, որովհետև պակասում էին սպաներ և ենթասպաներ և մանաւանդ որ այդ մասերը ռազմական պատրաստութիւն չունէին: Ամբողջ հետևակ զօրքը, որ Էրզրումում բաղկացած էր 3000 հոգուց, մի ամբոխի փոխուեց: Զինուորները նստում են գնացքների մէջ, բաց պլատֆորմների վրայ և ճանապարհում դէպի Սարիղամիշ: Սպաները մեծ մասամբ մնացին Հասան-կալէում: Զօրամասի վստահելի մասն են կազմում միայն Մուրադի և Սեսպուհի ձիաւոր զօրամասերը, որոնց հրամայուած է պաշտպանել նահանջը և որը կը շարժուի դէպի ետ ռազմական կարգով: Այդ զօրամասն ունի 6 լեռնաթնդանօթ: Հասան-կսդէն թալանուած է և այրուում է: Այդ բոլորն այնքան արագ է կատարուել, որ մօտ 20 արտիլերիստ սպաներ մնացել են Էրզրումում, և Զենկինիչը համոզուած է, որ չեն փչացրած այն բոլոր արտիլերիան, որոնց համար հրաման էր տուած ոչնչացնելու: Դուրս է բերուած 4 լեռնաթնդանօթի կողպէքներն ու պանօրամները, արտիլերիական պահեստում մի պայթուցիչ ական է դրուած, որը պէտք է պայթէր 27-ի 11 1/2 ժամին Ախալիէ կոչուած ամրութեան վրայ: Տրապիզոնեան դրան մօտ եղած պարենաւորման մեծ պահեստը մնաց անվնաս: Ցիտադելի գլխաւոր արտիլերիական պահեստը պայթուցուեց Էրզրում մնացած սպաների խնդրով: Էրզրումի վրայ յարձակուող զօրքերի քանակը Զենկինիչը որոշում է՝ կանոնաւոր հետևակ զօրք 3000 մարդ 4 թնդանօթով և 4 գնդացիրով, 1 հեծելազօր գունդ, 3 էսկադրոն խառն զօրամաս և 1 օդանաւ: Մեր կորուստները մօտաւոր հաշուով աւելի քան 200 մարդ սպանուած և վիրաւոր: Գեն. Անդրանիկը իր շտաբով անցաւ Քէֆրի-քեօյ՝ հաւատ չունենալով Հասան-Ղալայի պաշտպանութեան համար կազմել գոնէ պաշտպան փոքրիկ զօրամաս և որպէսզի կազմակերպէ Քէֆրի-քեօյի համար որևէ պաշտպանութիւն: Այսօր 28 փետր. գեն Անդրանիկը զեկուցեց, որ այսօր առաւօտուանից Քէֆրի-քեօյն դատարկուում է, և Հասան-Ղալայից առաջագնաց զօրամասը հեռանում է, թէպէտ թշնամին ո՛չ մի տեղ չի երևում: Գեն. Անդրանիկը Խնուսի զօրամասին հրամայել է ետ գալ Կարաուրգան և այնտեղ կանգ առնել՝ պահապան մասեր կանգնեցնելով: Զինուորների տարերային շարժումը դէպի Սարիղամիշ շարունակւում է, և գեն. Անդրանիկը ենթադրում է, որ յոյս դնել մինչև անգամ ժամանակաւորապէս Սարիղամիշում անկարելի է: Որովհետև միանգամայն անյուսալի է պաշտպանել Թիւրքահայաստանը: Ես այսօր ուղարկում եմ Վեհիք - փաշային հետևեալ ռադիոհեռագիրը. «Որովհետև հաշտութեան բանակցութիւններն սկսուած են Տրապիզոնում մեր կառավարութիւնների միջև, ես հրամայել եմ Թիւրքահայաստանում գտնուած բոլոր զօրամասերին քաշուել դէպի պետական սահմանը: Ես համոզուած եմ, որ ձեր կառավարութիւնը, համաձայն ձեր նախկին հաղորդակցութեան, նոյնպէս իր զօրքերը կը կանգնացնէ

պետական սահմանների վրայ. մինչև որ կը վերջանան հաշտութեան բանակցութիւնները: 28 փետր. 12 ժ. N 493. Օդիշելիձէ»:

Օդեսան գրաւել են գերմանացիները:

Ե. Դէզէչկօրին կարգադրել է, որ Քութայիսում ընդհանուր զօրահաւաք լինի և սպստրաստութիւններ տեսնեն պաշտպանելու Բաթումը: Տուճիկները գալիս են Բաթումի վրայ, Գուրիան ոտի է կանգնել, իսկ ինչ վերաբերում է աճարներին (մուսուլման-վրացիներ) նրանք դաւաճանութեամբ են զբաղուած և պսրգ կերպով տաճկաց կողմնակիցներ են:

3 մարտի

Արդահանի քրիստոնեայ բնակչութեան դրութիւնը շատ է ծանրացել մանաւանդ թիւրքաց արշաւանքների պատճառով և ճանապարհներ էլ չկան. որ զոնէ փախչեն: Գիւղերը կողոպտւում են ու թալանւում: Կատարեալ տերրոր է տիրում ամբողջ շրջանում:

Սէյմ. 28-ին հաստատուեց Սէյմի պատգամաւորների ցուցակը:

Սօցիալ-դեմոկրատ փոքրամասնականների կողմից պատգամաւոր են ճանաչուած.

1. Ն.Ն. Ժորդանիա
2. Ի.Գ. Ծերեթելի
3. Ն.Ս. Չխէիձէ
4. Ե.Պ. Գեզէչկօրի
5. Ա.Գ. Զոհրաբեան
6. Ն.Վ. Բամիշվիլի
7. Ի.Ի. Բամիշվիլի
8. Ա. Ի. Չխենկելի
9. Մ. Ի. Սկօբոլև
10. Վ. Գ. Ջիբլաձէ
11. Գ. Պ. Գէորգաձէ
12. Մ. Ն. Սմիրնով
13. Ի. Ա. Բէզզաղեան
14. Ա. Ս. Լոմտատիձէ
15. Ղ.Գ. Տէր-Ղազարեան
16. Գ. Ֆ. Մախարաձէ
17. Ր. Մ. Արսենիձէ
18. Ե. Ա. Բերնշտէյն
19. Վ. Վ. Թեզայա
20. Ս. Վ. Ջիբլաձէ
21. Պ. Գ. Խոմերիկի
22. Գ. Պ. Էրաձէ
23. Կ. Ա. Անդրոնիկով
24. Գ. Է. Օնիաշվիլի
25. Ս. Գ. Պիրուզով
26. Գ. Ն. Անջապարիձէ
27. Ր. Ա. Չիխլաձէ
28. Գ. Գ. Գուրջուա
29. Գ. Աբաշիձէ
30. Գ. Ա. Գագլօև
31. Լ. Դաղէչկելիանի (մեռաւ)
32. Վ. Գ. Ախմեթելով

Ժողովրդական Ազատութեան կուսակցութիւնից՝ Ի. Ֆ. Սեմեոնով:

Սոցիալ-յեղափոխականներից՝ 1. Վ. Վ. Լունկևիչ, 2. Լ. Ն. Աթաբէկեան, 3. Ի. Պ. Գոբեչիա, 4. Ս. Ս. Սահակեան և 5. Լօրդկիպանիձէ:

Դաշնակցութիւնից

1. Զօրեան Ռոստոմ
2. Մ. Յովհաննիսեան
3. Հ. Օհանջանեան
4. Կ. Համբարձումեան
5. Յ. Զաւրեան (բժ.)
6. Ա. Շահխաթունեան
7. Օ. Ի. Քաջազնունի
10. Չիլինգարեան
11. Ս. Լ. Վրացեան
12. Գ. Ի. Խատիսեան
13. Ա. Նալչաջիան
14. Գ. Ջամոյեան
15. Ա. Ի. Խատիսեան
16. Ս. Ա. Խաչատրեան
19. Հ. Եալոնջեան
20. Խ. Համասիիտ
21. Գ. Ջալալեան
22. Ա. Սահակեան
23. Պ. Լեոնեան
24. Գ. Տէր-Յարութիւնեան
25. Ս. Քոչարեան

8. Ս. Տիգրանեան 17. Խ. Կարճիկեան 26. Գ. Մանդալեան
9. Կ. Ա. Ղազազեան 18. Մ. Յարութիւնեան 27. Գ. Տէր-Գէորգեան

Վրաց Նացիոնալ-դեմոկրատներից՝ Գ. Բ. Գվազավա:
Վրաց Սոցիալ-ֆեդերալիստներից՝ Գ. Մ. Լասխիշվիլի
Մահմեդականների Մուսավաթից և անկուսակցականներից

1. Սահմէդ-Իաուշ Ջաֆարով
2. Ալի Մարդան-բէկ Թօփչիբաշև
3. Ռասուլ-Զադէ
4. Ն-բէկ Ռասուլբէկով
5. Գ-բէկ Աղայև
6. Խ-բէկ Սուլթանով
7. Գ. Ա. Սամէդբէկով
8. Մ-բէկ Սահմուդով
9. Մ.Գ. Սէյիդով
10. Ա. Կարդաշև
11. Մ. Ռոստամբէկով
12. Ֆ-բէկ Խան-Խոյսկի
13. Խ. Խաս-Մահմէդով
14. Մ.Գ. Հաջինսկի Մելիք Եգանով
15. Հաջի Բաբաբէկով
16. Գ.Մ. Ախունդ-զադէ
17. Մ. Ախիջանով
18. Խ. Մելիք-Ասլանով

«Հումմէթից»՝ 1. Ախունդով, 2. Ի. Ավիլով, 3. Ա. Շեյխ-ուլ-իսլամով և 4. Ս. Աղամալով:

«Մուսուլման-սոցիալիստների բլոկից»՝ 1. Հայդարով, Ալիխան Կանտեմիրով, 3. Ա. Սաֆիկիւրդսկի, 4. Ա. Պէպինով, 5. Բ. Ռիգան, 6. Դ. Հաջինսկի և 7. Մ. Մեհիրրամով:

«Ինթիհատ» կուսակցութիւնից՝ 1. Ս. Մ. Ղօնիև, 2. Մ-եա Միխտիև և Ե. Կ. Մամէդբէկով:

- Այսօր երեկոյեան 7 ժամին Հայ-ժողովրդական կուսակցութիւնը բաց է անում իր ակումբը իր բիւրօյի շինութեան մէջ (Օբօլովինսկի N 25): Խօսելու է բացման մասին Միքայէլ Իվանիչ Բաբաջանեանցը:

Ջալալ-օղլի. 27-փետր. հեռագիր. «Փետր. 21-ին ղզզլլքիլիսեցիք յարձակուեցին Փոքր-Ղարաքիլիսա գիւղի մօտ հայ հովիւների վրայ: Մի հովիւ սպանուած է, մէկը վիրաւորուած, հրացանները տարուած են: Փետր. 25-ին Նովո-Ստեպանովկա գիւղի հայերից Բաշքիչեթի շրջանի թուրքերը քշեցին տարան 1500 գլուխ ոչխար: Փետր. 27-ին մի քանի հարիւր զինուած թուրքեր, վոնդելով գրաֆ Գօտլիբին, քշեցին տարան 600 կով» - Սիմօնեան: Երկրորդ հեռագիր 28 փետր. «Ուդէլի մօտ կռիվ է տեղի ունենում» - Սիմօնեան:

Հայոց Ազգային Խորհուրդին 1 մարտի հեռագրում են *Արդահանից*, որ հայ բնակչութիւնը զաղթում է, օգնութիւն են խնդրում:

4 մարտի

Այսօր կատարուեցան ընտրութիւններ Ռուսական Ազգային խորհրդի ընտրութեան համար: Գործում էր 4 ցուցակ զանազան խմբերի:

Թիւրքիոյ ռազմահայրապակցութիւն (բռնուած ռադիոհեռագրից տեղեկութիւններ). - ... Էրզրումում մեծ քանակութեամբ թնդանօթներ և ռազմամթերք է գրաւուած. իսկական քանակը դեռ չի որոշուած: Հայերը կորցրել են մօտ 2000 մարդ: Հայոց զօրամասը նահանջում է դէպի Հասսան-Ղալա ե Թորթում: Ծովափին մեր զօրամասերը մօտենում են նախկին պետական սահմանին: Տրապիզոնում մերոնք վերցրել են 82 զանազան չափի թնդանօթներ. իսկ Էրզրումում, ինչպէս ցարդ պարզուած է, 232 թնդանօթ: Մամսխաթունում՝ 18 ականացիր: Հայոց զօրամասը, որ կազմուած էր 2600 հետեակից 6 գնդացիրով և 240 հեծեալներից, յարձակուեց Ախլսքի ու Կարմուջի մօտ մեզ վրայ, սակայն մեծ կորուստներով ետ մղուեց: ... Էրզրումում վերցուած է 68 թնդանօթ, փոքր քանակութեամբ ականացիրներ և գնդացիրներ ե զրսհաւորում:

Ականներ. Ուրբաթ 2-ին մարտի քաղաքում կալանաւորուեց ամբողջ կազմակերպութիւն 35 հոգուց, որոնք իբրև զօրամաս ապրելիս են եղել զինուորական շինութեան մէջ, ունեցել են սեփական կառքեր, աւտոմօբիլ. ձիաներ. զէնք և այլն և Թիֆլիսի շատ թալաններ կատարել են դրանց ձեռքով: Զինուորական ատեանը այդ օրն եւ եթ սկսեց նրանց դատը և մարտի 3-ին առաւօտեան 4 ժամին դատարանը կայացրեց վճիռ. որի հիմանց վրայ դրանցից 12 հոգի (որոնցից 1 հայ, 1ռուս և 10 հոգի վրացի՝ նոյն օրն եւ եթ առաւօտեան 5 ժամ 30 ր. հրացանազարկ եղան. միւս 23 վերաբերեալ դեռ քննութիւն է կատարում: Նրանց բնակարանում գտնուած է ինչպէս վնասաւոր զէնքերի ցուցակը, նոյնպէս և նրանց, որոնց վրայ պիտի յարձակուեին:

Թաւրիզից գրում են Кавк. Слово-ին, որ ռուս զօրքերի հեռանալուց յետոյ պարսիկները գրաւել են մնացած ռազմամթերքները, թալանել են պահեստները և գրաւել ամբողջ Թաւրիզ-Ջուլֆա երկաթուղու կայքը:

Սէյմ. - Ե. Պ. Գէգէչկորին համարեա համաձայնութեան է եկել կուսակցութիւններին հետ և արդէն պատրաստել է Կաբինէթի՝ Մինիստրների ցանկը և վաղը նիրկայացնելու է Սէյմին ի յայտարարութիւն:

Բաթումում ակօպային դրութիւն է յայտարարուած, քաղաքը լցում է զօրքով:

Ընդհանուր հաշտութիւն. - Լուրեր են պտտում, որ այս օրերս հաւանքուելու է եւրոպական խաղաղարարը Կոնֆերենցիա, որտեղ ենթադրում են կապել ընդհանուր դաշինք Ռուսաստանի հաշուին, վասն զի Անգլիան և Ֆրանսիան չեն կարողանում թոյլ տալ, որ Ռուսաստանում կարող է հաստատուել վերջնականապէս Գերմանիայ գերիշխանութիւնը: Тифл. Лист. 4/III N 50.

- Ասում են. որ բոլշևիկները գրաւել են Գանձակը, բայց դեռ լուրը չէ ստուգուած:

Թիւրքիա և հաշտութիւն. - Հեղինակաւոր աղբիւրներից հաղորդում են, որ ամենակարճ ապագայում կը լուծուի այն հարցը, թէ շարունակել բանակցութիւնները Թիւրքիոյ հետ հաշտութեան մասին թէ ոչ, որովհետև թիւրքերը շատ անհաւասար պահանջներ են անում Անդրկովկասից:

Կարսից նահանգական կօմիսսար Ջամոյեանը հեռագրում է, որ Օլթիի շրջանում քրդական շարժում է սկսուել, ճանապարհները ու հեռագիրը կտրուած են, յոյն գիւղերը վտանգի մէջ են: Ուղարկուած է զինուորական ոյժ:

Բագուից 2-ին մարտի Գանձակ թուրք և հայ պատգամաւորութիւն է ուղարկել կարգը վերականգնելու համար: Խնդրում են, որ Թիֆլիսն էլ հեղինակաւոր խառն պատգամաւորութիւն ուղարկէ:

«*Հորիզոնը*» հաղորդում է Բագուի «Արև» թերթից վերցնելով, որ Պարսկաստանով ո՛չ մի ռնգլիսկան զօրք չի գալիս, բայց շուտով անգլիացիք կը գրաւեն Մոսուլը, որից 40 վ. վրայ են գտնւում:

Մշակը հաղորդում է, որ փետրուարին վախճանուել է սրտի պայթումից Էջմիածնում բազմալեզուագէտ» և նկարիչ ծեռագրային մանրանկարների Մեսրոպ վ. Մաքսուտեանը: Հանգուցեալը Ապուչէխցի էր, ուսած Կ.Պոլսոյ վարժարաններում, աւարտեց Գէորգեան ճեմարանը, ուսաւ Գերմանիայում և շարունակ աշխատում էր Էջմիածնում: Տիրապետում էր յոյն, արաբ, տաճիկ, պարսիկ, գերմաներէն, ֆրանսերէն, անգլերէն, ռուսերէն լեզուներին և միևնոյն ժամանակ երևելի գրաբարագէտ էր:

Էրզրումից անվտանգ Սարիղամիշ են հասել բոլոր աշակերտներ և ուսանողներ: Կաղզուանի շրջանում խմբուած են մեծ քանակութեամբ վիախստուսկաններ:

Բաղուից. - Փետր. 22-ին Բաղու հասած եւրոպացի ճանապարհորդները պատմել են, որ Լեակ և Ուջարի կայարանների միջև թուրք զինուած մասան յարձակուելով երկաթուղու գնացքի վրայ, ներս խուժեց կուպէները և տեղնուտեղը թոկերով խեղդեց 10 հայերի, սրախողխող արաւ մի հայ քահանայի, որի դիակը պատուհանից դուրս շպրտեց: Մի ուրիշ կուպէում էլ քերթում են ծերունի հայի գլուխը և կարծելով մեռած է՝ թողնում, հեռանում են: Թուրքերի հեռանալուց անմիջապէս յետոյ ծերունին մտնում է դիմացի կուպէն, որտեղ լինում են եւրոպացի ճանապարհորդները: Թուրք աւազակները չբաւականանալով այն չարչարանքներով, որ հասցրել էին խեղճ ծերունուն, նորից ներս են խուժում այդ նոյն կուպէն, դուրս են անում եւրոպացիներին և այս անգամ աւելի զազրելի չարչարանքներ տալով սպանում են նրան: Լեակը - Բաղու երկաթուղագծի կայարաններում գտնւում են մեծ քանակութեամբ հայեր, որոնց ֆիզիկական գոյութիւնը անապահով է, խնդրում են շուտափոյտ օգնութիւն: *Եղբա՛յր, ոչ մի հայ չի ցանկանում ձեր արիւնոտ ազատութիւնը, որին զոհ ենք գնում մենք հայերս լիրբ թուրքերից և դրան վկայ է էշացած Սէյմը:*

5 մարտի

Կոնդակ Էջմիածնի կալուածքների խլման մասին

«Գէորգ՝ ծառայ Յիսուսի Քրիստոսի, կամօքն Աստուծոյ եպիսկոպոսապետ և կաթողիկոս ամենայն Հայոց, ծայրագոյն պատրիարք համազգական նախամեծար աթոռոյս Արարատեան առաքելական մայր եկեղեցւոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի»

Անհնարին է ցաւօք համակեալք, գամք ի ձեռն Կոնդակիս յայտ առնել հարազատիցդ մերոց ոմանց զցաւս, որ հասին մեզ ի վերջնում աւուրս: Զի ընթեռնումք յօրագիրս, եթէ անակնկալ իմն տնօրինութիւնք Յանձնակատար խորհրդոյ Կովկասեան շրջանի, գան հանել ի ձեռաց Հայրապետի Ամենայն Հայոց և ի ձեռաց Հայ եկեղեցական իշխանութեանց և Հոգաբարձութեանց եկեղեցեաց գամենայն կալուածս վանուրէից մերոց և եկեղեցեաց, որով և կապտիմք յիրաւանց հասոյթից ազգային ընդհանուր սեպհականութեանց մերոց և ստացութեանց, որք են յանուն Մեծի Աթոռոյս:

Եւ դժուարին լինի մեզ հաւատալ, եթէ յեղակարծ կարգադրութիւն ինչ վերի վայր յեղեղեսցի հիմնական օրէնք և կարգ տիրապետութեան Ս. Եկեղեցոյս և այն ի ժամանակի, յորում կամքս, ի ժամանակի, երբ ամենայն հաստատութիւն և հատուած ազգային ունի կազմակերպիլ ինքնորիշ օրինադրութեամբ, ազատակամ, ինքնիշխան և ի ձեռն ազգային կազմակերպութեանց իւրոց:

Նա զի իրաւունքս այսոքիք այնու ևս առաւել գտանին զօրացեալ և անհեղլի հաստատեալ. զի ոչ տեղական ինչ են կայքդ և զոյգ, և ո՛չ մասնաւոր ինչ են սեպհականութիւն և մատակարարութեան իրաւունք նորին և պատկանեալ միայն Հայոց, որ ի սահմանս շրջանի Կովկասու և կամ ի սահմանս համայն Ռուսիոյ. այլ են նիւթական տուչութիւնք և անկապուտ սեպհականութիւնք ամենայն Հայոց, որ ի սփիւռս աշխարհի և համարձակօրէն իսկ մարթ է հաստատել, եթէ առաւելագոյնք են ի նոսա մասնակցութիւնք Հայոց բնակելոց ի Պարս, ի Հնդիկս, ի գաւառս Տաճկական Հայաստանի և ամենայն Հայոց, որք ի ծագս աշխարհիս:

Եւ չկարէր իսկ այժմ այլազգ ինչ լինել. զորչափ Մայր Աթոռս համարի և է կնդրոն բովանդակ Հայ Առաքելական Ս. Եկեղեցւոյ, զորչափ Գլուխ Ամենայն Եկեղեցեաց Հայոց և ընտրական քահանայապետութիւն առ բովանդակ հայ ժողովրդն կայ կապեալ, առ որ յօդեալ են ամենայն անդամք նորս. իբր միոյ ևեթ մարմնոյ. իբրև անանջատ մասունք միայնոյ Հայ եկեղեցւոյ:

Առաւել են ծանրայ յաչս մեր տնօրէնութիւնդ այդ, քանզի ըստ նուիրական կարգաց, որ հիմն եկեղեցւոյս մերոյ. հասք և եկամուտ սեպհականութեանց այդոցիկ ի կրթութիւն և ի դաստիարակութիւն մանկանց Ս. Եկեղեցւոյս գնան, յայդ աղբիւր մշտական կան կապեալք դպրոցք մեր ի ստորին ծխականց ցդպրոցս ցՃեմարան մեր հոգևոր, ընդ հովանեաւ ո-

լոյ կրթեցան և կրթին մանկունք մեր ի գաւառաց Կովկասեան շրջանի, եթէ ի հեռաւոր վայրից Եւրոպիոյ, Ասիոյ և Ամերիկայի, ուսանց խստրութեան իւիք: Ի հասիցդ են մատակարարութիւնք այլ և այլ հաստատութեանց կրթականի և լուսաւորութեան Ազգիս, պահապանութիւն Տպարանի Մայր Աթոռոյս, Թանգարանի և ճոխագոյն Մատենադարանի նորին, յոր որպէս ասե ճրագ լուսատու ոչ սակաւք են, որ գան յուսումնասիրութիւն ի գիտնոց: Ի ձեռն աղբերացդ են, որ պահպանի եկեղեցականութիւն Ս. Եկեղեցոյս ի Գլխոյ նորին ցյետին սպասաւոր, և եթէ խցեսցին աղբիւրք, ապաքէն և զմահ հաստատութեան հաւատոյս ունիմք տեսանել 'ի մօտոյ:

Եւ ասիր, եթէ ի ժամանակս բռնութեան և հալածանաց ազգն Հայոց ոչ ամենևին դանդաղեաց ծառանալ ընդդէմ բռնութեան ի պաշտպանութիւն իլսուանց իւրոց, մի՞թէ յաւուրս ազատութեան, ինքնորիշ կազմութեան չելանիցէ մէն մի անհատ ժողովրդեան իմոյ դէմ դնել անիրաւի որոշման և ասել ի ձայն բարձր, եթէ *«Մի որ յամարձակեսցի բառնալ զսեպհականութիւն մեր, որ ժառանգեցաք և 'ի պահապանութիւն որոյ ունիմք դնել զկեանս մեր իսկ»:*

Ուրախ եմք ի սիրտ և ի հոգի, զի իրաւունք սեպհականութեան մերոց դրացեաց, գՎրաց ասեմք և զմահմեդականց, կան և մնան անշարժ որպէս և ակն իսկ էր և իրական:

Արդ մի՞թէ հայն առաւել նուազ ունի ցուցանել ոգի ասպետական և զէր կրօնական, քան զդրացիս իւր. մի՞թէ ոգի նորա ունի խոնարհել ընդ լծով անիրաւացի որոշան: Քա'ւ. գիտեմք և հաւատամք, եթէ գտցի յազգի իմում նոյն ոգի առաքինի ասպետութեան և զգացման առ սրբութիւն հանրական սեպհականութեան իւրոյ:

Մաղթիմք սրտագին կար և զօրութիւն ամենեցունցդ յայս գործ մեծ և աղօթեմք հասնել ի գլուխ պաշտպանութեան իւրեանց եկելոց առ մեզ ի նախնեաց մերոց և տալ սերնդեան մերոյ, որ գկնի մեր:

Ողջ լերուք զօրացեալ ի Գլուխն հաւատոյ Մերոյ և օրհնեալք Մենջ: Ամէն:

Գէորգ Ե. Կաթուղիկոս Ամենայն Հայոց
Ի 10-ն Յունուարի 1918 ամի ըստ տոմարիս Ռ-34 է
'Ի Հայրապետութեան մերոյ Է. ամի յԱրարատեան Մ.
Աթոռ Ս. Էջմիածին: Ի Վաղարշապատ, Թ. 44:

- Լուրեր են պտտում, որ Տրապիզոնում մեր պատուիրակութիւնը անյաջողութեան է հանդիպել, և տաճիկները պահանջել են մանդատներ:

6 մարտի

Տաճկական հաշտարար պատուիրակներն են՝ 1. *Հուսէին Բաուֆ բէյ,* առաջին կարգի կասլիտան, կայսերական Ծովային բաժնի շտաբի պետ, առաջին պատուիրակ (նախագահ), 2. *Մահմէդ Նուսրէդ բէյ* - արտաքին գործոց նախարարութեան իրաւաբանական մասի կառավարիչ, 3. *Դոքտոր Թէվֆիկ Սալիմ բէյ* - գնդապետ, Կովկասի ճակատի տաճկական բանակի գլխավոր բժիշկ, 4. *Խուզրէվ բէյ* - ընդհ. սպայակոյտի սպայ, Կովկ. ճակատի օսմ. բանակի օպերատիւ մասի պետ, 5. *Իւսուֆ Ռիզա բէյ* - պահեստի սպայ, 6. *Իսմայիլ Համի բէյ,* առաջին քարտուղար, Պոլսի համալսարանի պրոֆեսոր, 7. *Համիդ բէյ* - օսմանեան կայսերական նաւատորմիղի առաջին կարգի կապիտան-քարտուղար, 8. Լէյտենանտ *Աբդուրահման* - քարտուղարի ադիւտանտ:

Բաուֆ բէյը ողջունել է մեր պատուիրակութեան, որին պատասխանել է Չխէնկելին: Բաուֆ բէյը ինքնաբերաբար ստանձնելով նախագահի դերը, արտասանել է հետեւեալ ողջունի ճառ. «Շնորհակալ լինելով երկնքին, որ ինձ առիթ շնորհեց իմ երկրի և ընկերակիցների անունից բարի գալուստ մաղթելու յարգելի ներկայացուցիչներին Անդրկովկասի, որը ցարիզմի անկումից յետոյ աստիճանաբար առաջանում է անկախութեան ճանապարհով: Ես պատիւ ունեմ դիտելու այս առիթը իբրև իմ կեանքի ամենահաճելի ուրախութիւններից մէկը: Յուսնձին ձեր, այսօր ողջունելով ձեր երկիրը՝ ոչ միայն ձևականութեան և դիպլոմատիկական աւանդութիւնների անհրաժեշտութիւնից դրդված՝ ես աւելի շատ ոգևորուած եմ յարգանքի զգացմունքով և աջակցելու ցանկութեամբ այն գործին, որի ներկայացուցիչն էք հանդիսանում դուք: Ի նկատի ունենալով, որ ցարիզմի դէմ մեր մղած բոլոր պատերազմական գործողութիւնները եղել են մեր երկրների համար պաշտպանողական պատերազմներ՝ ես կարծում եմ, որ մեր ընդհանուր ճակատագիրներն աւելի և աւելի կապել են այդ ընդհանուր փառաւոր պատմութեան ընթացքին: Վերջին մեր ապրած շրջանը, դժբախտաբար, խանգարեց շօշափելի կերպով գործադրելու մեր պատմական պարտականութիւնը ձեզ օգնելու գործում, և ես հասկացած եմ, որ մենք բոլորս այստեղ համարում ենք մեզ բաժանող արգելքի անկումը սուելի կարևոր երևոյթ. քան ամենից աւելի աչքի ընկնող դիւանագիտական յաջողութիւնը. որովհետև մեզ միացնող կապերը հանդիսանում են ոչ միայն պատմական ու աշխարհագրական, այլ աւելի շատ ազգակցական կապեր, որ բղխում են մեր ընդհանուր ասնցեալից: Հենց այդ պատճառով Կովկասեան և տաճկական ժողովուրդները այժմ կազմուած են միևնոյն կրօններից և ազգերից և համարեա միևնոյն պատմութիւնն ունին: Ոգեորուած այս զգացմունքներով՝ ես մաղթում եմ երջանիկ ելք մեր խորհրդակցութիւնների համար և յայտարարում եմ առաջին ընդհանուր նիստը բացած»:

Այս ֆրանսերէն լեզուով արտասանած ճառին Անդրկովկասեան պատուիրակութեան նախագահ Չխէնկելին պատասխանել է Բաուֆ բէյին հետևեալ ճառով, որ այստեղ առաջ եմ բերում ամբողջութեամբ. «Անդրկովկասեան Սէյմի հաշտարար պատուիրակութեան անունից մատուցանում եմ իմ ամկեղծ շնորհակալութիւնը օսմանեան կառավարութեան հաշտարար պատուիրակութեան նախագահին այն ողջոյնի խօսքի համար, որը նրան հաճելի եղաւ հենց հիմա արտասանելու: Սրա հետ մեկտեղ ողջունում եմ տաճկական պատուիրակութիւնը:

Ես առանձին ուրախութիւն եմ յայտնում օսմանեան կառավարութեան պատուիրակութեան նախագահի սդջոյնի խօսքի վերջին մասի ւսոթիւ. ցանկանալով յաջողութիւն յառաջիկայ ընդհանուր աշխատանքին, պատուիրակութեան նախագահը յայտնեց, որ նրան իբրև հիմք, նա դնում է անկեղծութիւնը: Անդրկովկասեան պատուիրակութիւնն առանձին վստահութեամբ է վերաբերւում այդ խօսքերին, մանաւանդ որ երկու երկրների միջև բարեկամական յարաբերութիւնները հաստատելու նախաձեռնութիւնը բղխում է օսմանեան կառավարութիւնից, իսկ ինչ վերաբերւում է Անդրկովկասեան ժողովուրդներին, նրանք յանձին Անդրկ. Սէյմին յայտնեցին անկոտրում հաւատը հաստատելու Տաճկաստանի հետ ամենաանկեղծ և բարեկամական յարաբերութիւններ:

Եթէ ձեզ հաճելի եղաւ ասելու, որ դուք համարում եք ձեզ համար բացառիկ հաճոյք մեզ ողջունելու հնարաւորութեան վայրկեանը, թոյլ տուէք մեզ աւելի ևս յաւակնութիւն ունենալու այդ հաճոյքին, որովհետև Անդրկովկասեան պատուիրակութիւնն առաջին անգամ լիազօր օրգան Սէյմի անունից դրդս է գալիս միջազգային հյարաբերութիւնների ճանապարհը: Հենց այդ պատճառով, որ մենք առաջին անգամ ենք գալիս, մեզ հարկ չկայ դիւանագիտութիւն անելու: Ամեն մի դիւանագիտութիւն, ամեն մի գաղտնիքի բացակայութիւն - ահա՛ ղեկավար սկզբունքը Անդրկովկասեան յեղափոխական ժողովուրդների:

Անդրկովկասի ազատ ժողովուրդները, որոնք իրենց ձեռքն են առել իրենց ճակատագրի տնօրինումը, ի վիճակի կը լինին պաշտպանելու իրենց երկրի շահերը, բայց պաշտպանել այնպէս, որ ոչ մի դէպքում չխանգարեն հարևան ժողովուրդների շահերը:

Մէկ անգամ էլ ողջունելով ձեզ՝ ես վերջացնում եմ նոյն բանով, ինչով հաճեցիք վերջացնել և դուք. մենք ոչ միայն ցանկանում ենք յաջողութիւն մեր զբաղումների, այլև տալիս ենք կատարեալ երաշխիք, որ բովանդակ եռանդով պիտի ձգտենք անկեղծ և բարեկամական յարաբերութիւններ հաստատելու Անդրկովկասի և Տաճկաստանի ժողովուրդների միջև»:

SAMVEL MURADYAN

PAGES FROM H.TER-ASTVATSATRYANTS' NEWLY DISCOVERED DIARY "TRAGEDY MEMORIUM" (1918)

The consisting of 243 standard pages handwritten diary reflects the most important political, economical and ethnic incidents in the first half of 1918 in Transcaucasus, Turkey and other neighbouring countries. The author is well informed inhabitant of Tbilisi H.Astvatsatryants, who often participated in those incidents. The work has been kept in archive of M.G.Nersisyan. In this publication the inscriptions made from 1st to 6th of March, 1918 are being presented to reader.